




**Հ.Մ.Ը.Մ.-ի Լիբանանի  
Մ կ ա ու տ ն ե ր**

**Տեղեկատու Թիւ 1  
Մարտ 2020**



# «Պատուոյ վրայ երդնուլ ազգին ու հայրենիքին որեւէ կերպով օգտակար ըլլալ»

ՇԱԻԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ



“Ազգասիրութեան ամենէն կարելոր  
գործերէն մէկն է սիրելի անոնք, որոնք օր մը  
ազգին նայուածքները, յոյսերը,  
ակնկալութիւնները իրենց վրայ պիտի  
կեդրոնացնեն, ամէն հայ տղու եւ ամէն  
ճնողքի համար մեր ստեղծած նոր  
շարժումը, Հայ Պոյ Սկառտներու շարժումը  
-հաւատքի չափ նուիրական պէտք է ըլլայ,  
որովհետեւ ան հիմնուած է  
ազգասիրութեան եւ բարոյականութեան  
առաջնորդող գաղափարներուն վրայ:

Մեր երդումը շատ կարճ ու պարզ պիտի  
ըլլայ. հրաւերը ազգային է, որովհետեւ  
յառաջ գալիք բարիքը ազգային պիտի ըլլայ.  
այդ երդումը կը պարտադրէ. :

Այս երդումը գիտակցօրէն կընեն, այս  
երդումին տակ կը ստորագրեն ու ձեզի  
կըսեն պիտի չուզէի ք ինձի պէս ընել:”

# Բարեկենդանը Տարեցները Յարգելով

Այնճարի մասնաճիղ | Լոռի փաղանգ



“Մենք յաջողեցանք բարեկենդանի առթիվ երակենդանութիւն և ուրախութիւն պարգևել մեր տարեցներուն”

Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի Մասնաճիղի Լոռի փաղանգը գործակցութեամբ Լ.Օ.Խ.ի Աղթամար մասնաճիղին հետ, 22 փետրուար 2020ին կազմակերպեց տարեցներու բարեկենդան, ներկայութեամբ 48 տարեցներու:

Անոնք, երգով, պարով ու աւանդական խաղերով հաճելի պահ մը անցուցին, ծանօթացան բարեկենդանի աւանդութեան և ճաշակեցին բարեկենդանի աւանդական “գլուրով ապուրը”: Աւարտին ունեցան նաև Մուսա լերան աւանդական “Ապտիլը”:

“Այս յարգանքը տարեցներուն և երիտասարդներուն ուրիշ տեղ չկայ: Շնորհակալ ենք այս յայտագիրը պատրաստողներուն և իրենց առողջ կեանք և յարատեւում:”

*Սոյն աշխատանքին մասնակից Պրն. Յակոբ Հաճեան*

# Ամէն կողմ ծպտուած սկաուտներ

Բարեկենդան



Պէյրութի մասնաճիւղէն Անթիլիասի մասնաճիւղ անցնելով Պուրճ Համուտէն, Ժտէյտիէն, Ջահլէէն հասնելով Այնճար բոլորը անխտիր տօնեցին բարեկենդանը հայկական և աւանդական ձեւերով, մեծերով ու փոքրերով:

Այսպէս սկաուտները ծպտուած՝ մրցեցան իրար դէմ, հաճելի խաղերով, համեղ ուտեստեղէններով մեծ խանդավառութեամբ ուրախ ժամանակ անցուցին: Անոնք ծանօթացան Բուն բարեկենդանի աւանդութեան:

Մասնաճիւղ մը “քաջ Վարդան” թէմայով յատուկ Վարդնանց պատերազմը յատկանշող ձեռնայիններ պատրաստելով, ուրիշ մը, Լորտ Պէյտըն Փաուլի տարեդարձը տօնելով, այլ մասնաճիւղ մը աւանդական *Ապտիլ*-ին ծանօթանալով:







# Ձիւնի Բանակում Ձիւնագնացութիւն

Պէյրութի մասնաճիւղ



Աւանդական դարձած Սկաուտական տարեկան ձիւնագնացութիւնը տեղի ունեցաւ 15 և 16 փետուարի 2020ին Աժալթուն շրջանին մէջ մասնակցութեամբ 123 մոկլի, գայլիկ, արծուիկ, արի և արեւուշներու ինչպէս նաեւ 30 ծնողներու, ընտանեկան ջերմ մթնոլորտի մէջ:

Նոյն թուականին, Քանաթ Պէքիշ շրջանէն ներս, մասանճիւղի Ջարեհեան փաղանգի երէցներն ու Սեղրի փաղանգի պարմանուհիները մասնակցեցան ձիւնի բանակումի, ուր չարքաշութեամբ յաղթահարեցին ցուրտ օդին, շինելով ձիւնէ քարայրներ ու գիշերելով անոնց մէջ:



## Պտոյտ

Պուրճ Համուտի մասնաճիւղ | Արի և Արեւուշ խումբեր

16 փետրուարին կատրեցին իրենց եռամսեայ պտոյտը, այցելեցին Laser Tag ու խմբային մրցակցութեամբ, մեծ խանդավառութեամբ սորվեցան՝ ինչպէս ինքնապաշտպանուիլ, խմբակի անդամներուն օգնել և բարձր Սկաուտական Ոգի-ով մրցիլ:





# Դաստիարակչական

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկաուտական բոլոր մասնաճիւղերը կը կազմակերպեն իրենց դաստիարակչական դասընթացքները առաջին եռամսեայի ընթացքին:

Այս դասընթացքներուն ընթացքին, տարազաւորներուն կը փոխանցուին՝ ազգային, կրօնական, միութենական, քաղաքացիական, կազմակերպչական, առողջապահական, մարզական և սկաուտական գիտելիքներ տարբեր մակարդակներու վրայ:

Անկախ արշաւներէ, մրցակցութիւններէ ու ընկերային ջերմ մթնոլորտէ... Տարբեր մասնաճիւղերէ աւելի քան 200 տարազաւորներ ներկայ գտնուեցան դաստիարակչական սեմինարներու տարբեր շրջաններ է ներս ու օգտուեցան աւելի քան 45 դասախօսներու փոխանցած գիտելիքներէն աւելի եւս զարգացնելով իրենց սկաուտական գիտելիքներու պաշարը:







# Ռաստիարակչական Վկայություններ

Այնճար մասնաճիղին՝ Քր. Գարօլ Քենտիրճեան և քր. Ճիւլի Փամբուբեան կը վկայեն: “Օգտաշատ սեմինար մըն էր, նոր գիտելիքներ ամբարեցինք և լաւ ժամանակ անցուցինք”:

Անթիլիաս մասնաճիղին՝ Քր. Ճոյ Պասուս կը վկայէ թէ դասախօսական շարքը օգտակար էր, մթնոլորտը շատ լաւ էր; բոլոր թեկնածուները խանդավառ էին թէ դասախօսութիւններու ընթացքին և թէ ինքնաշխատութեան բաժնով:

ժտէյտէ մասնաճիղին եղբայր մը կը վկայէ, “Անհամբեր ենք մեր Սկաուտական երդումը կատարելու”:

Պուրճ Համուտի մասնաճիղին արծուիկ քոյր մը կը վկայէ, “մենք անցուցինք անմոռանալի երկօրեայ սեմինար մը որ դրոշմուեցաւ մեր մտքերուն մէջ”:

Անթիլիասի մասնաճիղին՝ քր. Բարտի Արսլանեան կը վկայէ, “Երկօրեայ սեմինարի ընթացքին ծանօթացանք եւ զարգացուցինք մեր սկաուտական, ազգային եւ միութենական գիտելիքները: Մորվեցանք նախնական դարմանում եւ աւելի մօտէն ծանօթացանք եկեղեցական եւ կրօնական նիւթերուն, ինչպէս նաեւ սկաուտական նոր գիտելիքներով զարգացուցինք մեր մտքերը”:







# Հայապահպանում

Հ.Մ.Ը.Մ.ի Դաստիարակչական Ծրագիրներու կարելորագոյն կեդրոնացումը տրամադրուած է ՀԱՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ

Այսպէս՝ Պուրճ Համուտի մասնաճիւղի Շուշի փաղանգի պարմանուհիները ներկայ գտնուեցան դասախօսութեան մը՝ նիւթ՝ Չաւախքի և թրքացած կամ իսլամացած հայերու մասին:

## Չարքաշ Կեանք

Պուրճ Համուտի մասնաճիւղ | Կիզէն Ջագարեան փաղանգ

*Սկաուտական Կեանքի կարելոր մէկ առաջադրանքը չարքաշութիւնն է*

Հաւատալով՝ “առողջ միտք, առողջ մարմնի մէջ”, կարգախօսին, երէցները բարձր սկաուտական ոգիով, չարքաշօրէն, իրենց մասնակցութիւնը բերին մարզական հանգրուանային խաղերուն:





# Կապեր...

Հ.Մ.Ը.Մ.ի Սկաուտները պզտիկ տարիքին կը սորվին սկաուտական հանգոյցներ, կապեր, հիւսքեր և փաթառաւորներ, նպատակ ունենալով՝ անոնց մէջ ձեռային հմտութիւն ու ստեղծագործ միտք զարգացնելը:

Այս ծիրէն ներս Պուրճ Համուտի մասնաճիւղի գայլիկները ստացան դասախօսութիւն մը կապերու մասին և ապա գործնականօրէն փորձեցին կիրարկել տեսականը, անոնք շինեցին եռոտանիներ և խաչկապ կապեր:

Յէն 11 տարեկան գայլիկները իրենց անհատական ուժերուն վստահելով, հաստատուն կապերով ձեռայիններ պատրաստեցին:





# Կրօնական

Հ.Մ.Ը.Մ.-ի Սկաուտները միշտ ներկայ եղած են հայկական եկեղեցիներուն անուանակոչութեան տօնին ու ընդունելութեան արարողութեան:

Դասախօսութիւններու միջոցաւ անոնք յաւելեալ տեղեկութիւններ կը ստանան հայ սուրբերու՝ կեանքին ու աշխատնքին մասին:

Այսպէս Հ.Մ.Ը.Մ.-ի Պէյրութի Արծուիկ երանը Սուրբ Սարգիսի Անուանակոչութեան տօնին առթիւ ունեցաւ դասախօսութիւնը մը Սբ. Սարգիսի կեանքին մասին: Արծուիկները պատրաստեցին և վաճառեցին Սբ. Սարգիսի անուշեղէններ՝ պահպանելով հայկական ավանդութիւնները:

Արծուիկները զարդարեցին անոր դիմանկարը և սիրոյ արտայայտութիւններով կազմեցին իրենց երամին սրտիկը:



